

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ 2015Թ.  
ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2015թ. մարզի արդյունաբերական ձեռնարկությունների մեկնարկը կարելի է համարել դրական: 2015թ. 1-ին եռամսյակում մարզի արդյունաբերական ձեռնարկությունների կողմից թողարկված արտադրանքի ծավալը համադրելի գներով կազմել է՝ 27684.6 մլն դրամ, 2014թ. նույն ժամանակաշրջանի 16302.6 մլն դրամի դիմաց կամ արդյունաբերական արտադրանքի ծավալի աճը կազմել է 169.8% (հանրապետականը՝ 102.0 %), բացարձակ աճը՝ 11382.0 մլն դրամ: Ընթացիկ գներով թողարկվել է 27221.4 մլն դրամի արտադրանք: Լոռու մարզի արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը հանրապետության արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում (ընթացիկ գներով) 1-ին եռամսյակի արդյունքներով կազմել է 9.4 % (4-րդ ցուցանիշը): Պատրաստի արտադրանքի իրացման ծավալը կազմել է 22986.7 մլն դրամ, աճի ինդեքսը՝ 146.3%, որից ԱՊՀ երկրներ՝ 182.9 մլն դրամ (0.8%) և այլ երկրներում 14711.8 մլն դրամ (64.0%):

Արտադրության ծավալի աճը հիմնականում արդյունք է «Թեղուտ» ՓԲԸ-ի շահագործման և պղնձի գնի որոշ բարձրացման (5600 դոլարից 6200 դոլար): Մարզի արդյունաբերության հիմնական տեսակների ծավալները, աճերը և դրանց տեսակարար կշիռները 2015թ. 1-ին եռամսյակի արդյունքներով ունեն այսպիսի տեսք՝

- մշակող արդյունաբերություն՝ 11502.3 մլն դրամ, ծավալի աճի ինդեքսը՝ 96.6% և տեսակարար կշիռը՝ 41.5% (2014թ. 1-ին եռամսյակ՝ 73.0%);
- հանքարդյունաբերություն՝ համապատասխանաբար՝ 13836.8 մլն դրամ, 559.6% և 49.9% (2014թ. 1-ին եռամսյակ՝ 15.2%);
- էլ.էներգիայի արտադրություն՝ համապատասխանաբար՝ 2094.5 մլն դրամ, 124.3% և 7.6% (2014թ. 1-ին եռամսյակ՝ 10.3%);
- ջրամատակարարում, թափոնների մշակում և այլ ճյուղեր՝ համապատասխանաբար՝ 251.0 մլն դրամ, 104.7% և 1.0% (2014թ. 1-ին եռամսյակ՝ 1.5%):

2015թ. արտադրության ընդհանուր ծավալում նվազել են մշակող արդյունաբերության, էներգետիկայի և այլ ճյուղերի տեսակարար կշիռները, մեծացել է հանքարդյունաբերության կշիռը՝ 34.7 %-ով:

2015թ. առաջին եռամսյակում 31 արտադրական ձեռնարկություն արտադրանք չեն թողարկել, 2014-ի նույն ժամանակաշրջանի 32-ի դիմաց: Առաջին եռամսյակում էլ. էներգիա արտադրող 24 ընկերություններից 6-ը բնեղեն արտահայտությամբ իջեցրել են արտադրության ծավալները: Ընդհանուր առմամբ վիճակագրական հաշվետվություն ներկայացրած մարզի 114 արտադրական ձեռնարկություններից ընթացիկ գներով առաջին եռամսյակում արտադրության ծավալի նվազում են ունեցել 39-ը (ձեռնարկությունների 34.2%-ը), առավել մեծ նվազում ունեն Վանաձորի «Ռոստոմ և Զոհրապ» ՍՊԸ-ն՝ 72.2%, «Հարատիդ» ՍՊԸ-ն 49.3%, «Քարաբերդ» ՍՊԸ-ն՝ 42.8%, Տաշիրի «Դումիկյան եղբայրներ» ՍՊԸ-ն 82.7%, Գուգարքի «Արտուշ Գևորգյան» ՍՊԸ-ն՝ 56.8%, Գուգարքի անտառտնտեսությունը՝ 61.7% և այլն:

Առաջին եռամսյակում տարբեր պատճառներով արտադրանք չեն թողարկել Վանաձորի «Արդվին» ԲԲԸ-ն, «Ավտոգեն-Մ» ՍՊԸ-ն, «Բիոնիկ» ՍՊԸ-ն,

Ստեփանավանի «Կաբինետ» ՍՊԸ-ն, Տաշիրի «Սեդրակ և Տիգրան» ՍՊԸ-ն, Լավարի անտառտնտեսությունը և այլն:

2015թ. առաջին եռամսյակում առաջին անգամ արտադրանք են թողարկել կամ վերականգնել են նախկին արտադրությունները՝ «Թեղուտ» ՓԲԸ-ն (10.1 մլրդ դրամ), «ԶինՎան» ՍՊԸ-ն, Ստեփանավանի «Պլազմա» ՍՊԸ-ն և այլն:

2015թ. մարզի մշակող արդյունաբերության մեջ ընթացիկ գներով ըստ ճյուղերի պատկերը հետևյալն է.

Հ/հ	Ճյուղի անվանումը	2015թ. 1-ին եռ.	2014թ. 1-ին եռ.	Աճը, %	Բացարձակ աճը, ±	Հազ. դրամ	
						Տեսակարար կշիռը, %	
						2015թ.	2014թ.
1	Քիմիական արդյունաբերություն	88440.0	40164.0	220.2	48276.0	0.8	0.3
2	Թեթև արդյունաբերություն	308919.0	494296.0	62.5	-185377.0	2.7	4.2
3	Սննդի արդյունաբերություն	3774602.0	3614996.0	104.4	159606	32.7	30.4
4	Մեքենաշինություն և սարքաշինություն	9473.0	103924.0	9.1	-94451.0	0.08	0.9
5	Փայտամշակում և կահույքի արտադրություն	2591.0	4156.0	62.3	-1565.0	0.02	0.03
6	Մետալուրգիա	7245627.0	7634482.0	94.9	-388855.0	62.8	64.1
7	Այլ ճյուղեր	108077.0	13413.0	805.8	94664.0	0.9	0.1
	Ընդամենը	11537729.0	11905431.0	96.9	-367702.0	100.0	100.0

2015թ. առաջին եռամսյակում ընթացիկ գներով արտադրության ծավալի աճ են ապահովել քիմիական, սննդի արդյունաբերությունները և այլ ճյուղերը:

Առաջին եռամսյակի արդյունքներով մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ ունեն «Թեղուտ» ՓԲԸ-ն՝ 37.1%, «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ն՝ 26.6%, «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ն՝ 6.0%, «Սազամար» ՓԲԸ-ն՝ 5.6%, Սպիտակի «ԱՏ Գրեյն» ՍՊԸ-ն՝ 1.9%, «Ձորագետ հիդրո» ՍՊԸ-ն՝ 1.1%, Վանաձորի «Գլորիա կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն՝ 0.7% և այլն:

Ըստ տարածաշրջանների 2015թ. թողարկված արտադրանքի ծավալն ընթացիկ գներով ունի այսպիսի տեսք.

Հ/հ	Տարածաշրջանը	2015թ. 1-ին եռ.	2014թ. 1-ին եռ.	Աճը, %	Բացարձակ աճը, ±	Հազ. դրամ	
						Տեսակարար կշիռը, %	
						2015թ.	2014թ.
1	Սպիտակ	674911.0	905710.0	74.5	- 230799.0	2.5	5.6
2	Տաշիր	150232.0	105598.0	142.3	44634.0	0.5	0.6
3	Գուգարք	572552.0	359988.0	159.0	212564.0	2.1	2.2
4	Ստեփանավան	1955399.0	1007221.0	194.1	948178.0	7.2	6.1
5	Թումանյան	23080943.0	12647160.0	182.5	10433783.0	84.8	77.6
6	ք. Վանաձոր	787375.0	1276926.0	61.7	- 489551.0	2.9	7.9
	Ընդամենը	27221412.0	16302603.0	170.0	10918809.0	100.0	100.0

Արտադրության ծավալի աճ են ապահովել Տաշիրի, Գուգարքի, Ստեփանավանի և Թումանյանի տարածաշրջանների ձեռնարկությունները, նվազում է արձանագրվել Սպիտակի տարածաշրջանի (74.5%) և Վանաձոր քաղաքի (61.7%) ձեռնարկություններում:

Առաջին եռամսյակի արդյունքներով արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակը կազմել է 7024 մարդ, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 6385 մարդու դիմաց կամ աշխատողների թիվն ավելացել է 639 մարդով (110.0%): Աշխատողների թվաքանակն ավելացել է հանքագործական արդյունաբերությունում՝ 1213 մարդով, էլ.էներգիայի արտադրությունում՝ 14 մարդով, այն զգալիորեն նվազել է մշակող արդյունաբերությունում՝ 569 մարդով, այդ թվում՝ քիմիական արդյունաբերությունում՝ 435 մարդով, մետալուրգիայում՝ 42 մարդով, մեքենաշինությունում՝ 66 մարդով և այլն:

Աշխատանքի արտադրողականությունը 2015թ. առաջին եռամսյակում մարզի արդյունաբերությունում կազմել է 3875.5 մլն դրամ՝ միջին հանրապետական 3621.0 մլն դրամի դիմաց կամ հանրապետական ցուցանիշը գերազանցում է 107.0%-ով:

Առաջին եռամսյակում մարզի արտադրական ձեռնարկությունների կողմից բնեղեն արտահայտությամբ արտադրվել է կոնվերտորային պղինձ (սև պղինձ) 2416.0 տոննա, պղնձի խտանյութ՝ 5112.0 տոննա, ցինկի խտանյութ՝ 1305 տոննա, լաքաներկանյութեր՝ 22.0 տոննա, երկաթբետոնյա իրեր և կոնստրուկցիաներ՝ 2014.0 տոննա, կարի արտադրանք (բաճկոններ)՝ 72.7 հազար հատ, պանիր՝ 38.9 տոննա, ալյուր՝ 2.7 հազար տոննա, համակցված կերեր՝ 1.0 հազար տոննա, հաց՝ 416.6 տոննա, ոչ ալկոհոլային խմիչքներ՝ 222.0 հազար լիտր, մածուկ՝ 41.6 տոննա և այլն: